DOI: 10.57192/18291864-2025.3-3

ԻՆՉՈ՞Ի Է ԹԻՐԱԽԱՎՈՐՎՈՒՄ ԱՐԱՐԱՏԸ*

Ամփոփում

Հոդվածը ցույց է տալիս, որ ներկայումս Արարատ լեռան՝ Թուրքիայի տարածքում գտնվելու փաստը «Արարատ» հասկացությամբ խորհրդանշվող մեր ազգային հիշողության ու համաքրիստոնեական արժեհամակարգի հետ «շփոթելու» հնարքը հայ ժողովրդի հանդեպ շարունակվող մշակութային ցեղասպանությունը ՀՀ սահմաններից ներս տեղափոխելու փորձ է:

Քանի որ դրանով թուրք-ադրբեջանական տանդեմը ինքնաբերաբար ներգրավվում է Հայաստանի ներքաղաքական դիսկուրսի մեջ, ապա նման մարտահրավերի քննությունը հնարավոր է միայն երկու՝ համաժամանակյա և տարաժամանակյա հարթություններում: **Առաջինը** պահանջում է Հայկական լեռնաշխարհի տեղանունների վերաբերյալ թուրք-ադրբեջանական պատկերացումների գիտական ուսումնասիրությունը, որպեսզի բացահայտվեն քոչվորների ու տեղաբնիկների լեզվամտածողության սկզբունքային տարբերությունները: **Երկրորդը** պահանջում է լուսաբանել Հայաստանի առանցքային դերը՝ Արարատ լեռան ու Արարատի երկրի մասին Հին Արևելքի դիցաբանական պատկերացումները համադրելու, վերաիմաստավորելու և ողջ քրիստոնեական քաղաքակրթությանը փոխանցելու գործում: Նման քննությունից են բխում հոդվածի երկու հիմնական եզրակացությունները: **Առաջին** Հայկական լեռնաշխարհի բնաաշխարհագրական միջավայրի մասին թյուրքական ժողովուրդների ստացած տպավորությունները ոչ թե տեղանուններ են, առավել ևս էթնիկ խորհրդանիշներ, այլ սոսկ ժամանակին տվյալ տարածքով անցած քոչվորականի պարզունակ լեզվամտածողությունն արտացոլող ազգագրական նյութեր: **Երկրորդ** նման հպանցիկ պատկերացումների միջոցով ողջ քրիստոնեական քաղաքակրթությանը պատկանող Արարատի պատմա-

* Հոդվածն ընդունվել է տպագրության 26.11.2025:

կան ու մշակութային հետագիծը ջնջելու փորձերը քողարկում են Հայաստանն ու հայկական մշակույթը ոչնչացնելու և թյուրքական աշխարհի մեջ ներառելու ցեղասպանական մտադրությունները:

Ելնելով նման եզրակացությունից՝ հոդվածը խիստ անբավարար է համարում թուրք-ադրբեջանական միասնական ռազմավարության դեմ պարզ հակադարձումների միջոցով գործելու մարտավարությունը, որն առանց Հայաստանի համար քաղաքակրթական առումով հոգեհարազատ արտաքին ազդակների լայն ներգրավման՝ դատապարտված է ձախողման: Այդ նպատակով հոդվածի վերջում ներկայացվում են կոնկրետ առաջարկներ՝ Արարատի քաղաքակրթական հետագծի պաշտպանության գործի մեջ Հայաստանի հետ պատմական ընդհանուր հիշողություն ունեցող քրիստոնեական աշխարհի ներգրավման մեթոդների ու աշխատակարգերի վերաբերյալ:

Բանալի բառեր–Արարատ, մշակութային ցեղասպանություն, էթնիկ խորհրդանիշեր, քաղաքակրթական հետագիծ, մշակութայնացում, քաղաքակրթական դալտոնիզմ, քաղաքական առաջադրանք:

WHY IS ARARAT BEING TARGETED?

Abstract

The article shows that the current fact of Mount Ararat being located within the territory of Turkey, and the fact of “touching/violating” the concept of “Ararat”, which symbolizes national memory and the Christian value system, is an attempt to transfer the ongoing cultural genocide against the Armenian people inside the borders of the Republic of Armenia.

Since through this the Turkish-Azerbaijani tandem is automatically involved in Armenia’s internal political discourse, the examination of such a challenge is possible only on two planes: synchronic and diachronic. The first requires carrying out a scientific analysis of Turkish-Azerbaijani perceptions regarding place names of the Armenian Highland and, through comparative examination, revealing the fundamental differences between the linguistic thinking of nomads and indigenous peoples. The second requires illuminating Armenia’s pivotal role in combining, reinterpreting, and transmitting the mythological ideas of the Ancient Near East concerning Mount Ararat and the Land of Ararat to the entire Christian civilization.

Two main conclusions of the article stem from such comparative examination. First, the superficial perceptions of the Turkic peoples about the

Armenian Highland—especially its northeastern part, which has long been culturally developed—are in fact not place names, much less ethnic symbols, but merely ethnographic materials reflecting the primitive linguistic thinking of nomads who once passed through that territory. Second, the attempts to erase the historical and cultural trajectory of Ararat, which belongs to the entire Christian civilization, through the revival of such superficial perceptions, reflect genocidal intentions to destroy Armenia and Armenian culture and integrate them into the Turkic world.

Based on such a conclusion, the article considers extremely insufficient the strategy of acting against the unified Turkish-Azerbaijani military-political doctrine through simple counter-statements, which—without broad involvement of external impulses culturally close to Armenia—is doomed to fail. For that purpose, the end of the article presents concrete proposals regarding the methods and procedures for involving the civilized world, which has a common historical memory with Armenia, in the protection of the civilizational trajectory of Ararat.

Key words - Ararat, cultural genocide, ethnic symbols, civilizational trajectory, cultural development, civilizational daltonism, political agenda.

ПОЧЕМУ ПРИЦЕЛИВАЮТСЯ НА АРАРАТ?

Резюме

Статья показывает, что подмена национальной памяти и общехристианской системы ценностей, символизируемой понятием «**Арарат**», с фактом нахождения горы Арарат на территории современной Турции, является попыткой перенести продолжающийся культурный геноцид по отношению к армянскому народу в пределы Республики Армения.

Поскольку тем самым турецко-азербайджанский тандем автоматически вовлекается во внутриполитический дискурс Армении, то рассмотрение такого вызова возможно только в двух измерениях: синхронном и диахроническом. **Первый** требует проведения научного исследования турецко-азербайджанских представлений о топонимах Армянского нагорья и выявления существующих принципиальных различий между языковым мышлением кочевников и коренных жителей. **Второе** требует осветить ключевую роль Армении в сопоставлении и переосмыслении мифологических представлений Древнего Востока о горе Арарат и Стране Араратской и ее передаче всей христианской цивилизации. Из такого анализа вытекают две основные выводы статьи. **Во-первых**, поверхностные впечатления тюркских народов о

Պատմաբանասիրական հանդես, ԺԷ (ԺԳ) տարի, թիվ 3 (91), հուլիս-սեպտեմբեր, 2025

давно уже культурно освоенной природно-географической среде Армянского нагорья, на самом деле являются не топонимами, тем более этническими символами, а всего лишь этнографическим материалом, отражающим примитивное мышление кочевников, когда-то прошедших через эту территорию. **Во-вторых**, попытки стереть исторический и культурный след Арарата, принадлежащего всей христианской цивилизации, посредством таких мимолетных представлений, скрывают геноцидальные намерения по уничтожению Армении и армянской культуры и их поглощению тюркским миром.

Исходя из этого вывода, статья считает крайне недостаточной тактику простого противодействия единой турецко-азербайджанской стратегии, которая без широкого привлечения цивилизационно близких внешних импульсов, для Армении обречена на провал. С этой целью в конце статьи представлены конкретные предложения по методам и процедурам вовлечения христианского мира, имеющего общую историческую память с Арменией, в дело защиты цивилизационного следа Арарата.

Ключевые слова: Арарат; культурный геноцид; этнические символы; цивилизационная траектория; культурное освоение; цивилизационный дальтонизм, политическая задача.

Մուտք

Որպես որոշակի քաղաքակրթական արժեքների խորհրդանիշ՝ հումանիտար գիտության մեջ և հոգևորի բարձր ոլորտում **Արարատը** երբեմն ավելի մեծ ճանաչում ունի, քան ներկա Հայաստանի Հանրապետությունը: Այդ պատճառով մեր հրապարակման մեջ հակված ենք **Արարատ** բառ-հասկացությունը դիտարկելու ոչ թե որպես սովորական լեռ և անգամ՝ երկրանուն, այլ հայ ազգի ու Հայաստան պետության **քաղաքակրթական այցեքարտ**:

Արարատի հետևողական թիրախավորումները, որոնք իրականացվում են առնվազն՝ Հայաստանի 1991-ի վերանկախացումից հետո, և կտրուկ կերպով ակտիվացել են վերջին տարիներին, մեր մշակութային միջավայրի փոփոխությանը միտած քայլեր են, որոնք ունեն իրենց պատմական, էթնո-հոգեբանական և ընդլայն-քաղաքակրթական արմատները: Միայն այդ ամենի լուրջ քննության միջոցով է հնարավոր բացահատել Արարատի շուրջ նյութվող դավերի մութ ծալքերը և գտնել դրանց չեզոքացման աշխատակարգերը:

Արարատի թիրախավորման պատմաքաղաքական ենթահողը ավելի քան պարզ է՝ ի դեմս մեր սրբազան լեռան՝ նախ՝ 1920 թվականին ռազմակալվել է ՀՀ լեգիտիմ տարածքը, ապա նրա զավթումն «օրինականացվել է» աշխարհակարգի փոփոխության պահին՝ 1921-ին կատարված՝ «ծովը լեռան դիմաց» կամ «Բաթումի նավահանգիստը՝ Արարատի փոխարեն» աշխարհաքաղաքական առևտրի միջոցով: Դրանով կրկնակի անգամ ոտնահարվել են Հայաստանի իրավունքները, այսինքն՝ առանց վերջինիս հավանության նրա տարածքը փոխանակվել է երրորդ երկրի օգտին արված զիջումների դիմաց: Ուստի Հայաստանի 1991-ի վերանկախացումից հետո պետական սուվերենության գաղափարի շահարկման միջոցով Թուրքիայի կողմից պարբերաբար գործի է դրվում Արարատի «մշակութայնացման» սեփական բանաձևն իր զոհին պարտադրելու քաղաքականությունը՝ քանի դեռ ներկա աշխարհաքաղաքական հեղաբեկումները չեն հասել իրենց ավարտին[1]:

Ցանկացած պետության ինքնիշխան տարածքում առկա հոգևոր-մշակութային արժեքները մեխանիկորեն չեն նույնանում նրանում իշխող էթնոսի մշակութային ժառանգության հետ, ուստի դրանց գիտական գնահատականները չեն կարող հենվել սուվերենության ու տարածքային ամբողջականության ձևական չափորոշիչների վրա: Ավելին՝ նման արժեքները հաճախ ոչ միայն առանձին էթնոսի, այլև ողջ մարդկության մշակութային հիշողության մաս են: Դրանցից մեկն էլ հազարամյակներ շարունակ կուտակվել է **Արարատ** խորհրդանշական անվան շուրջ: Քաղաքակրթության պատմության մեջ առանձնահատուկ դեր ունեցող նման ունիվերսալ խորհրդանիշերն ավելի բարձր են որոշակի հանրույթի էթնիկ հիշողության հարթությունից: Ավելին՝ դրանք ուրվագծում են էթնիկությունից դեպի քաղաքակրթական ընդհանրություններ տանող ճանապարհին առկա իրական կոլիզիաները, որոնց համատեքստում թուրք-ադրբեջանական ու հայկական ընկալումները գտնվում են հակամետ դաշտերում:

---

[1] Հայտնի է, որ Արարատն իր մեջ ներառող Սուրմալուի գավառի փոխանակումը Բաթումի մարզի հյուսիսային հատվածի հետ հիմնված է 1921 թվականի մարտի 16-ի Մոսկվայի Լենին-Աթաթուրք ոչ լեգիտիմ գործարքը տեղայնացրած Կարսի պայմանագրի վրա: Ուստի նրանում ժամանակավորապես ամրագրված Արարատ լեռան ու Նախիջևանի կարգավիճակների վիճելիության փաստը հանգիստ չի տալիս մեր հարևաններին:

1. Հայկական էթնիկ խորհրդանիշերի թուրք-ադրբեջանական ընկալման առանձնահատկությունները

Արտաքուստ տարօրինակ է թվում, որ թյուրքական ցեղերի համար սրբազան Ալթայան լեռներից հազարավոր կիլոմետրերի հեռավորության վրա բնակվող մեր հարևանները իրենց իրավունք են վերապահում երազելու Ալթայի և Բայկալի մասին, բայց մերժում են նույն իրավունքը՝ հայերի տեսողության դաշտում գտնվող Արարատի պարագայում: Պատճառն այն է, որ հայկական տարածքների թուրք-ադրբեջանական ընկալումները հիմնված են իրենց համար խորթ ու օտար միջավայրի բնաշխարհագրական բնութագրերի վրա: Քանի որ քոչվորական թյուրքերի համար մշակութային առումով հոգեհարազատ միջավայրերը հեռվում են մնացել, իսկ օտար քաղաքակրթական տարածքը՝ ձիերի սմբակների տակ, ապա նրանց ժառանգները մոռացել են իրենց **շամանների** ու **թենգրիականության** մասին: Այդ պատճառով վաղուց արդեն մշակութայնացված Արարատը և հայկական մյուս խորհրդանիշերը, այնքանով են տեղավորվել թյուրքական ցեղերին բնորոշ պատկերացումների տիրույթում, որքանով ծառայել են իբրև ոչխարների արոտավայրեր ու ժամանակավոր պատսպարման վայրեր՝ յայլաներ: Այսինքն՝ նոր միջավայրերի մշակութայնացման թյուրքական մեթոդաբանությունը հենված է բնության ու նրա պարգևների յուրացման սկզբունքի վրա: Նրանց համար սրբազան իմաստ ունեն միայն նախնիների գերեզմանները և տարբեր արշավանքների ու արյունոտ բախումների մասին վկայող տեղավայրերը: Մնացածը պարփակված է ընդամենը մի քանի տասնյակ բառ-հասկացությունների միջոցով որոշակի տարածքի բնաշխարհագրական չափորոշիչների գունային ընկալման շրջագծում: Ուստի Հայկական լեռնաշխարհին բնորոշ բնության ու մշակութային հուշարձանների պատկերումը չի ստեղծել նոր մշակութային միջավայր, այլ ապամշակութայնացրել է տվյալ տարածքը՝ այն վերածելով նախնադարյան մարդու պարզունակ թոթովանքների ասպարեզի, որտեղ, օրինակ՝ սև քարերով կառուցված եկեղեցիներ ունեցող Արևելյան Հայաստանի երկու խոշոր բնակավայրերը՝ Վանաձորն ու Սիսիանը ստացել են նույն անվանումը՝ Ղարաքիլիսա: Ակնհայտ է, որ սկզբում եղել են քիլիսաները (եկեղեցիները), ապա եկել է քոչվորականը, որը հաշվի առնելով դրանց գույնը (իսկ հնարավոր է նաև՝ չափսերը, քանի որ **ղարա** հասկացությունը կրկնակի իմաստ ունի), դրանք կոչել է Ղարաքիլիսա: Հարց է առաջանում՝ ի՞նչ բնութագրեր կստանային այդ նշանավոր բնակավայրերը, եթե զարդարված լինեին ոչ թե եկեղեցիներով,

այլ մշակիթներով: Ուրեմն ու՞մ էին պատկանում վերջերս Ադրբեջանի նախագահի կողմից «պատմական հողեր» բնութագիրը ստացող Արևելյան Հայաստանի տարածքները՝ նախքան իր սահմանափակ բառապաշարով նրանցում մի քանի գույներ տարբերակած քոչվորականի հայտնվելը: Քանզի նման գիտաքաղաքական նոնսենսից ստացվում է, որ «պատմական հողեր» ունենալու համար հիմնականում՝ 17-րդ դարի սկզբներին՝ շահ Աբասի կողմից Հայաստանում վերաբնակեցված ղզլբաշ ցեղերի ժառանգներին այսօր բավական է կրկնել իրենց խաշնարած պապերից մնացած դաղ (սար), սու (ջուր), թոփրակ (հող) և ամենակարևորը՝ գոյուն (ոչխար) հասկացություններն ու դրանց պատկերման գունապնակը՝ կարա (սև), ակ (սպիտակ), կիզիլ (կարմիր), յեշիլ (կանաչ), մավի (կապույտ), որպեսզի դրանց հարյուրավոր կոմբինացիաների միջոցով Հայկական լեռնաշխարհը դարձնեն իրենց «պատմական հողերը»: Այդ պատճառով հայկական տեղանունների թյուրքացման փորձերի «ադրբեջանական» կրկնօրինակները ոչ թե որոշակի տարածքի մշակութայնացման վկայություններ են, այլ ժամանակին քոչվորականների ստացած հպանցիկ տպավորությունների գունապնակ: Դրանց գումարելով հայերենից կատարված թարգմանություններն ու հայերենի աղճատումները՝ կարելի է Արարատը վերածել Աղրը դաղի (ցավի լեռ), Սևանի երկնագույն մակերեսը դարձնել Գյոյչա, Տավուշը՝ Թովուզ և այլն, բայց հնարավոր չէ մշակութայնացնել վաղուց արդեն անվանակոչված լեռը, լիճը, կամ՝ տեղավայրը:

Ուստի երբ մեր հարևանները Աստծո կողմից տրված բնությունը՝ մարդու կերտած մշակույթի հետ նույնականացրած իրենց քոչվորական նախնիների ***քաղաքակրթական դալտոնիզմի*** վկայությունները «պատմական հողերում» առկա տեղանուններ են համարում, ապա սեփական կամքից անկախ ընդունում են, որ մշակութայնորեն իրենք կապ չունեն ներկայումս զբաղեցրած տարածքների հետ՝ ընդհուպ մինչև պարսկերենի հարուստ լեզվական գունապնակը ներառող՝ Ապշերոնի թերակղզին:

Ավելին՝ 21-րդ դարում, խաշնարածի մտածողությունը պետական սահմանների հետ նույնականացնելու անհնարինությանը գումարվել են նաև քաղաքակրթական գործոնները: Ուստի բնիկ ժողովուրդների տարածքները մշակութազերծ անելու նման փորձերը մարտահրավեր են նետում ոչ միայն հայերին, այլև մեր մյուս հարևաններին և ողջ քրիստոնեական աշխարհին: Օրինակ՝ քանի որ վերջերս ադրբեջանցիները վրաց-ադրբեջանական սահմանի վրա գտնվող վրացական Դավիթ Գարեջա վանական համալիրը դարձրել են **Քեշիկչի դաղ**, ապա կարելի է ենթադրել, որ այդ պատմական համալիրի ստորոտին նրանց նախնիները կամ

այծեր (Keçi) են արածացրել կամ՝ վանական (Keşiş) են տեսել: Բայց երկու դեպքում էլ եզրակացությունը մեկն է՝ տվյալ մշակութային միջավայրը կապված է ոչ թե **այծերի**, այլ **վանականների** հետ: Բայց ահավասիկ այծապահների ժառանգները արդեն հասցրել են Արցախի հանդեպ իրականացրած իրենց հաշվեհարդարի մեթոդաբանությունն օգտագործելով՝ յուրացնել վրացական վանական համալիրը՝ նրա վրա իրենց **աղվանական կեղծիքը** տարածելու միջոցով: Նույնի վկայությունն են ներկայումս Արցախում իրականացվող հապշտապ ավերումների ու ձևափոխությունների միջոցով մշակութային միջավայրն արագորեն փոխելու փորձերը, որոնցում նույնպես հայկական քրիստոնեական խորհրդանիշները փոխակերպվում են ընտանի կենդանիների ու նրանց տերերի՝ բեյերի անվանումների: Որովհետև մշակույթի մնայուն, քաղաքակրթական շերտը ստեղծում են նստակյաց կյանքով ապրող մարդիկ՝ նրան փոխանցելով իրենց գործառնական դերերը, որոնք ոչ մի կապ չունեն քոչվորականի արկածալից կյանքի մասին վկայող՝ **բասար-գեչարների** կամ՝ **բաշ-քեչմազների** հետ:

Այս ամենը խոսում է այն մասին, որ գործ ունենք նախապես զավթված մշակութային միջավայրերն աստիճանաբար **հայրենիքի** վերածելու անհեռանկարային փորձերի հետ, քանի որ մեր տարածաշրջանը՝ Վրաստանը կամ Հայաստանը ոչ մի կապ չունեն քոչվորական ցեղերին բնորոշ աշխարհագրական միջավայրերի՝ լայնածավալ տափաստանների հետ: Ուստի արևելքից լցվելով մեր զույգ գետերի՝ Քուռի և Արաքսի հովիտները՝ նրանք ժամանակին բախվել են լեռների ստորոտին կառուցված վանքերում աղոթող բնիկների դիմադրությանը: Բայց այժմ՝ Արցախը զավթելուց հետո, իրենց «**զույգ ցեղապետերի**» միջոցով պաշտոնապես պահանջ են ներկայացրել Վրաստանում՝ շուրջ կես միլիոն[2], իսկ Հայաստանում առայժմ՝ 300 հազար խաշնարածներ վերաբնակեցնելու մասին: Եվ երկու դեպքում էլ երեսպաշտորեն խոսվում է թուրքերին կամ՝ ադրբեջանցիներին իրենց **պատմական հայրենիք** վերադարձնելու մասին:

Հատնի է, որ գրեթե բոլոր եվրոպական ժողովուրդների ընկալումներում հայրենիքը հորից ստացած անշարժ ժառանգությունն է՝ **պատրիդան** կամ **ֆատերլանդը**: Նույնն է նաև միջնադարից մեր լեզվամտածողության մասը դարձած **հայրենիք** հասկացության պարագայում: Իսկ ինչ

[2] Հիշեցնենք, որ Թուրքիայի նախագահը մեսխեթցի (ախըսկա) թուրքերին ընդունելու պահանջը դրել է իր վրացի գործընկերոջ առաջ ճիշտ այն ժամանակ, երբ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը Սպիտակ տանն ընդունում էր Ադրբեջանի նախագահին ու Հայաստանի վարչապետին:

կա մյուս կողմում, եթե ոչ՝ մի քանի տարի առաջ Արցախը պաշարած ադրբեջանցի կեղծ բնապահպանների կողմից երգվող հանրահայտ երգի՝ «**Ման Ղարաբաղ–անա յուրդում»** բառակապակցության մեջ թաքնված **անա յուրթ–ի՝ մորական վրանի** գաղափարը: Դա ենթադրում է տարածքի ապամշակութայնացման խորհրդանիշերը նոր միջավայրերում տեղակայելու, և ոչ թե կառուցելու ունակությունը, քանի որ մինչ օրս թուրքական **թեքմեք** (ադրբեջաներեն՝ **տիկմեկ**) բառը նշանակում է ոչ թե կառուցել, այլ ասեղնագործել: Դա վկայում է այն մասին, որ վրանաբնակի մտածողությունը պահպանած թուրքի հայրենիքն իրականում ողջ աշխարհն է, որի ցանկացած անկյունում կարելի է վերատեղակայել կամ՝ ձեռագործել սեփական՝ անա յուրթ–*ը*՝ շրջապատից թալանված իրերն ու մթերքներն այնտեղ տեղափոխելու համար:

Նման ընկալման քաղաքական հետևանքները դրսևորվում են զավթված Արցախի ամեն մի անկյունում Թուրքիայի ու Ադրբեջանի դրոշները տեղակայելու զավեշտի տեսքով, կամ էլ Արցախի Տիգրանակերտն իր մեջ պարառող Աղդամի շրջանի երկու վերականգնված գյուղերին **կենգերլի** ու **սարաջալի** քոչվոր ցեղերի «պատմական անունները» կպցնելով: Այսինքն՝ ըստ Ալիևի թուրք–ֆաշիստական մտածողության՝ ստացվում է, որ պատմությունը սկսվել է նոր ժամանակներում՝ կենգերլիների ու սարաջալիների ժամանումով, իսկ մինչ այդ Նախիջևանում ու Արցախում մարդիկ չեն ապրել, այլ ոչնչացման ենթակա աբորիգեններ, որոնց սպանած թուրք փաշաների անուններով են «զարդարվում» նրանց բնակավայրերը:

Ուշագրավ է, որ որոշակի տարածքի ցանկապատումով այն թուրքական սեփականություն դիտարկելու գործելակերպը ներկայումս տեղափոխվել է անգամ Գերմանիայի մայրաքաղաք Բեռլին, որտեղ ամբողջ թաղամասեր անա յուրթի վերածած թուրք վերաբնակիչներն արգելքներ են ստեղծում ոչ թուրքերի մուտքի համար: Ուստի եթե այսօր չկասեցվի Արցախի քաղաքների փողոցներին Հայոց ցեղասպանությունն իրականացրած պատերազմական հանցագործների անունները կպցնելու կրկնահանցագործությունը, ապա ներկայումս Բեռլինի ամբողջ թաղամասեր օկուպացրած թուրքերը վաղն իրենց իրավունք կվերապահեն Գերմանիայի մայրաքաղաքը վերանվանելու նրա փողոցներում սպանված «ամենամեծ շեհիդի»՝ Թալեաթ փաշայի անունով:

Պատմականորեն հայտնի է, որ էթնիկ տարածքների ապամշակութայնացման թյուրքական գործելակերպի հիմքը դրանք որպես արոտավայրեր դիտարկելու սովորույթն է, ինչը նախկինում ենթադրում էր քա-

ղաքների ավերում և զանգածային կոտորածներ: Ներկայումս փորձ է արվում կատարելագործել զավթումների իրականացման մեթոդաբանությունը՝ տարածաշրջանի հաղորդակցության ուղիների ընտրովի ապաշրջափակման միջոցով: Նման քողարկված զավթողականության արտահայտությունն է արդեն ողջ աշխարհում տարածված «Զանգեզուրի միջանցք» հորինածքը համաշխարհային բարօրության բանալի ներկայացնելու քարոզչական հնարքը, որից տպավորություն է ստեղծվում, թե իբր՝ հայերն են փակել Կենտրոնական Ասիայի պաշարները Եվրոպա արտահանելու ճանապարհը: Քանի որ հայկական կողմը պաշտոնապես չի հերքում այդ լկտի սուտը, ապա շուտով թուրքերի ու ադրբեջանցիների հնարավոր ագրեսիան հիմնավորվելու է համաշխարհային **գեոտնտեսական հրամայականներով**: Իսկ դրանից հետո ֆաշիստ Ալիևը հորինելու է նաև խմելու ջրի գլոբալ պաշարները «հայ զավթիչներից» ազատագրելու խնդիրը՝ քոչվորականի Գյոյչա («Երկնագույն») հպանցիկ տպավորության միջոցով նենգափոխվող Սևանի վրա հարձակվելու համար:

Երեկվա քոչվորականների կողմից ներկայումս մեր դեմ մղվող կոգնիտիվ պատերազմն օժտված է ահռելի դինամիզմով, ուստի ամեն օր մի նոր կերպարանք ձեռք բերող նրանց զավթողական (ինվահզիվ) տարերքը դրսևորվում է սեփական թիրախների մասին նորանոր հերյուրանքներ տարածելու միջոցով: Իսկ նրանց դիմաց կանգնած է ավանդական-թումանյանական «Հայոց լեռներում» իր անհամար գանձերի տակ կքած հայաստանյան ներտ ու հուսալքված հասարակությունը, որը փնտրում, բայց չի գտնում սեփական ընկալումների համաշխարհայնացման քաղաքակրթական բանալիները: Մինչդեռ եթե մենք չենք կորցրել ազգային ինքնագիտակցությունը, ապա պարտավոր ենք եզրակացնել, որ գործ ունենք բռնազավթված հայկական տարածքների հանդեպ դարեր շարունակ իրականացված մշակութային ցեղասպանության շարունակականության փաստի հետ, որից պետք է բխեն մեր բոլոր հետևությունները ու գործողությունները:

2. Արարատի քաղաքակրթական հետագիծը

Եթե վաղուց ձևավորած ու կայացած ազգերի կողմից դարեր առաջ ստեղծված արժեքների հանդեպ իրականացվող մշակութային ցեղասպանության անտեսումը ցեղասպանութան շարունակականությունն ապահովելու ստույգ երաշխիք է, ապա նրանց քաղաքակրթական տարածքը պահպանելու խնդիրը նախ և առաջ ենթադրում է սեփական արժեհա-

մակարգի խորիմացության վրա հիմնվող հստակ քաղաքականության որդեգրում: Այս առումով Արարատի մասին գիտական գիտելիքն անհրաժեշտ է ոչ միայն հայերին, այլև ողջ քաղաքակիրթ աշխարհին:

Մարդկային քաղաքակրթության արշալույսին Արարատը եղել է Միջագետքից հյուսիս ընկած Արատտա լեռնային երկրի խորհրդանիշը, որտեղ, համաձայն միֆական աշխարհընկալմամբ առաջնորդվող հինարևելյան պատկերացումների, ապրում էին Աստվածները: Ուստի պատահական չէ, որ Շումերի առասպելական հերոս Գիլգամեշը ձգտել է դեպի այդ սրբազնացված տարածքը, իսկ աքքադական կնիքներում Արարատը պատկերվել է հարավից, որի արդունքում նրա բարձր գագաթը, այսինքն՝ Մասիսը հայտնվել է ոչ թե աջ, այլ ձախ կողմում՝ ինչպես դա երևում է հարավից:

Հին Արևելքին բնորոշ միֆական աշխարհընկալումից՝ էթնիկության սկզբունքի վրա հիմնված պետության վերածվելու պրոցեսում Հայկական լեռնաշխարհի թեիստական խորհրդանիշ Արարատը անխուսափելիորեն պետք է դառնար նրանում ստեղծված առաջին պետության՝ Արարատի թագավորության անվանումը: Անկախ նրանից՝ որոշ լեզուներում այն հնչում էր որպես Ուրարտու, իսկ մյուսներում՝ Արարատ, դա տարբեր ցեղերի միաձուլումից առաջ եկած նույն էթնոսի ու պետության անվանումն էր, որն Առանցքային ժամանակում դոմինանտ հնդեվրոպական ժողովուրդների կողմից պետք է ստանար իրենց ու հայերի ընդհանրությունն ընդգծող Արմինա (պարսիկներ), կամ՝ Արմենիա (հույներ) էնդոնիմը: Դարակազմիկ հեղաբեկումների պահերին ավանումների նման հերթափոխը Հին Արևելքում Հայաստանի թեիստական ընկալումը տեղափոխել է պետական կեցության, իսկ նրանից էլ՝ քրիստոնեությանը բնորոշ պատկերացումների դաշտ, ինչի արդյունքում, հինարևելյան պատկերացումները վերածվել են էթնիկության սեփական ընկալման:

Ուստի Հայկական լեռնաշխարհի առաջին հողագործների ժառանգների կողմից քրիստոնեության ընդունումով իրականացվել է շումերա-աքքադական դիցաբանության փոխակերպումը քրիստոնեական ընկալումների: Եվ Արարատի երկիրը **վերսրբազնագործվել է** որպես մարդկության փրկության վայր՝ չորս գետերի արանքում ամփոփված դրախտի ու ջրհեղեղյան առասպելի մասին քրիստոնեական պատումների տեսքով: Դրանք, թափանցելով համաշխարհային աստվածաբանական ու պատմագիտական գրականության մեջ, Հայաստանում (Արմենիայում) են տեղակայել ոչ միայն մարդկության փրկության վայրը, այլև չորս գետերի միջև գտնվող դրախտը: Քանզի պատմության ընդլայն ընկալման տիրույթում սրանք

այլևս շումերա-աքքադական դիցաբանություն կամ նեղ-քրիստոնեական ընկալումներ չէին, այլ դրանցից բխող՝ որոշակի տարածքի **մշակութայնացման** հաջորդական հանգրվանների արտացոլումներ:

Հին Արևելքի թեիստական պատկերացումների փոխանցումը Հայաստանին, **իսկ նրանից էլ՝ ողջ քրիստոնեական աշխարհին**, **լեգիտիմացրել է մեր կեցությունը որպես մարդ-բանականի կողմից երկիր մոլորակի մշակութայնացման շղթայի անփոխարինելի օղակ**, **որը քաղաքակրթության արշալույսին՝ Առանցքային ժամանակում**, **սինթեզել ու հղկել է Հին Արևելքի ժառանգությունը՝ որպես անգին գանձ, և ապա քրիստոնեության խողովակով տեղափոխել միջնադար**, **իսկ նրանից էլ՝ նոր ժամանակներ**: Քանի որ, Աստվածաշնչյան պատկերացումների համակարգը ժամանակի ընթացքում կապվել է Արարատի երկրի այս կամ այն լեռան հետ, իր խորքում դա որոշակի տարածքի մշակութայնացման միջոցով իրականացված քաղաքակրթական «փոխանցումավազքի» արտահայտություն էր, որտեղ ամենևին էլ կարևոր չէր, թե կոնկրետ ո՞ր լեռան գլխին է իջել Նոյյան տապանը: Ուստի իզուր էին հետագայի մեր մեծամեծ գիտնականները վիճում իրար հետ՝ Կորդվաց Արարադի, Վասպուրականի Նեխ-Մասիքի, կամ՝ Արարատ-Մասիսի առաջնության հարցի շուրջ (**Բարխուդարյան, 2005; Պետրոսյան, 2005, 91-99**):

Խնդիրն այն է, **որ այս բոլոր լեռները Արարատի երկրում էին և այդ երկիրն էր նախքան ժամանակակից քաղաքակրթության ծնունդը գոյություն ունեցած միֆական միջավայրը՝ Հին Արևելքը**, **կապել Անտիկ աշխարհի հետ**, **իսկ նրա անկումից հետո՝ քրիստոնեությանը բնորոշ Աստվածաշնչյան պատկերացումների միջոցով փոխանցել համաշխարհային քաղաքակրթության նոր օրրանին՝ Եվրոպային**:

Ուստի իր մեծ առաքելության իրականացման պահին Արարատի երկիրն արդեն ոչ թե միֆական տարածք էր, կամ այնտեղ իշխող պետություն, այլ որոշակի ցեղի կամ էթնոսի երկիր՝ Հայ-Հայք: **Մարդկության պատմության բեկումնային պահերին քաղաքակրթական փոխակերպումների համար թթխմորի դեր խաղացած ազգերն անմահանում են՝ իրենցով մարմնավորելով նրա վերընթաց զարգացման հանգրվանները:** Ուստի մարդկության պատմությունն անհասկանալի կդառնա, եթե նրանից դուրս քաշենք Արատտա - Արարատի երկիր-Արմենիա պորտալարով միմանց կապած մեր անմահության խորհրդանիշ **Արարատը**:

Դա է պատճառը, որ միջնադարում **Արմենիա** և **Արարատ** հասկացությունները դարձել էին քրիստոնեական քաղաքակրթության անկյունաքարային պատկերացումներն ու տեղ գտել Եվրոպայի ժողովուրդների

բանահյուսական գրականության մեջ: Դրա մասին է վկայում նաև այն իրողությունը, որ հայոց պատմության դժնդակ պահին, երբ շահ Աբասի կողմից նոր էր դատարկվել Արարատյան դաշտավայրը և Մեծ Սուրգունից փրկված հայերը ծվարել էին իրենց նոր բնակավայր Նոր Ջուղայում, եվրոպական երկրներում սկիզբ էր առել մի տարօրինակ կրոնական շարժում, որի ներկայացուցիչները՝ **կարմելիտները** ցրտաշունչ Ռուսաստանով՝ բոբիկ ոտքերով փորձում էին հասնել Արարատին՝ այնտեղ իրենց հոգու փրկությունը գտնելու համար (Թումանյան Սվետլանա, 2014) :

Բնական է նաև, որ նոր ժամանակներում հայոց կյանքի աշխարհիկացումը պետք է ընդուներ սրբազան լեռան վրա բարձրանալու արգելքը՝ տաբուն հաղթահարելու տեսք, որ իրականացվեց մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի կողմից Արարատի գագաթը հաղթահարելու խիզախ քայլի միջոցով (Դերիկյան Վարդան, 2009): Բայց երբ նույն դարի վերջերին՝ 1897 թվականին, Բազելում սկզբնավորված սիոնիստական շարժումը ընդամենը հիսուն տարի անց՝ 1948-ին, հասավ Իսրայել պետության վերականգնմանը, ճիշտ այդ նույն պատմաշրջանում մեր Սիոնը ֆիզիկապես խլվեց մեզանից՝ դրվելով մեր առաջ որպես գերված ծնողի պատկեր, որն անընդհատ հիշեցնում է Հայաստանի քաղաքակրթական արմատների մասին: Ուստի ցեղասպան Թուրքիան խորհրդային իշխանությունների հետ հարաբերություններում միշտ էլ փորձել է առաջ քաշել Խորհրդային Հայաստանի զինանշանի վրա պատկերված Արարատից հրաժարվելու պահանջը, բայց որևէ արդյունքի չի հասել: Իսկ 1991-ին վերանկախացած Հայաստանի հետ Թուրքիայի հարաբերությունների բեկումնային պահերին **Արարատ** խորհրդանիշի փոփոխության հարցն ամեն անգամ ասպարեզ է բերվել սկսած **ֆուտբոլային դիվանագիտության** օրերին Հայաստանի հավաքականի մարզաշապիկից Արարատը հանելու պահանջից՝ մինչև այսօր ՀՀ սահմանային դրոշմանիշերի վրայից Արարատի գծանկարը ջնջելու անպատվաբեր քայլը: Բայց դրանք եղել են սոսկ խորհրդանիշի յուրացման փորձեր, քանի որ հնարավոր չէ Արարատը հանել հայերի ազգային հիշողությունից: Ուստի այժմ ձեռնարկվում են ավելի լուրջ քայլեր, որոնց խորքային նպատակը հենց իրենց՝ հայերի ներքին պառակտումն է Արարատի ու Արագածի երկրպագուների, այսինքն՝ հին ու նոր ինքնության կրողների:

3. Ինչու՞ են դիմակափոխվում Թուրքիան ու Ադրբեջանը

Ներկայումս՝ տարածաշրջանի աշխարհաքաղաքական կացության փոփոխության համատեքստում, Արարատի յուրացմանն անցնելու խնդիրը Թուրքիայի համար ձեռք է բերել այժմեական նշանակություն: Քանզի, եթե ոմանք կարծում են, թե Թուրքիան տարված է միայն մեծ Թուրանի ստեղծման երազանքով, ապա չարաչար սխալվում են: Թուրքերն աշխատում են բոլոր ուղղություններով առավելագույնին հասնելու նպատակադրումով, մանավանդ՝ երբ Դոնալդ Թրամփի իշխանության գալուց հետո ակնհայտ է դարձել Եվրամիության ու Ռուսաստանի հանդեպ ԱՄՆ-ի դիրքորոշումների վերախմբագրումը: Սրանում Թուրքիան տեսնում է ոչ միայն ապագա երկբևեռ աշխարհակարգի չինական նժարի մեջ տեղավորվելու («ՎԷմ», 2025), այլև Ռուսաստանից առավելագույնը պոկելու հնարավորություններ: Դրանցից մեկը Երամիություն-Թուրքիա հարաբերությունների ծիրում Հայաստանի պատանդառման խնդիրն է: Չար լեզուներն ասում են, որ թուրքերը քմծիծաղով են ընդունում մեր երկիրը Եվրամիության մեջ ներառելու ծրագրերը, քանզի մտադիր են Հայաստանին կախյալ վիճակում դնելու միջոցով մեզ դարձնել Եվրոպայի դռները ջարդելու քրիստոնեական մահակ: Դրա համար նրանք փորձում են մեզ պոկել Ռուսաստանից և վերավաճառել Եվրոպային՝ Եվրամիությանն իրենց անդամակցության դիմաց: Նման նկրտումների լեգիտիմացման համար թուրքերն այսօր գործի են դնում սեփական տարածքում ժամանակին ջախջախված հսկայական քրիստոնեական ժառանգության մասնակի վերակենդանացման մարտավարությունը: **Դրանով է պայմանավորված 2025-ին լրացող Նիկեայի տիեզերական ժողովի 1700-ամյակը Հռոմի նորընտիր գահակալի հետ նշելու քայլը**:

Ճիշտ նույն գործընթացներն արձանագրվում են նաև Ադրբեջան-Վատիկան հարաբերություններում, որի դարավոր կատակոմբների վերանորոգման համար մեր հարևան երկրի առաջին տիկինն ու փոխնախագահն արդեն մի քանի հարյուր միլիոն դոլարի նվիրատվություններ է արել Սուրբ Աթոռին: Ուստի աշխարհաքաղաքական ենթահող ունեցող նման զավեշտախաղը չէր կարող չտեղափոխվել նաև Հայաստանի հոգևոր դաշտ, որտեղ իրականում փորձ է արվում լուծել Հայաստանյայց Առաքելական սուրբ եկեղեցու էկումենիկ արևելումների փոփոխության հարցը:

Այդ պատճառով բիբլիական Արարատը կարող է դառնալ Թուրքիայի կողմից ժամանակին զավթված տարածքների «մշակութայնացման» նոր

բանաձևի հիմքը: Թուրքիան փորձում է մեզանից խլել այդ սրբազան խորհրդանիշը՝ այն օգտագործելով Արևմուտքի հետ իր հարաբերություններում: Նրանցում որոշակի առաջընթացի պարագայում Հայաստանն աստիճանաբար վերածվելու է Սուրբ Էջմիածնի շուրջը համախմբված փոքրիկ Արևելյան Վատիկանի, որն ապահովում է կրոնների երկխոսության ու փոխադարձ հանդուրժողականության պատրանքը: Զուգահեռաբար՝ թուրքական մտրակի դերը խաղացող Ադրբեջանի ձեռքով հասցվող պարբերական հարվածների միջոցով իրականացվելու է Հայաստանը 1918 թ. Բաթումի պայմանագրով նախատեսված սահմանների մեջ պարփակելու և թուրանական օվկիանոսում խեղդելու մարտավարությունը: Բայց Արևմուտքից սեփական անպատժելիությունը գնելու և Արևելքում ձեռքերի ազատություն ստանալու համար միասնական՝ թուրք-ադրբեջանական տանդեմն ունի այնքան ժամանակ, որքան **առայժմ** նրան տրամադրել է ԱՄՆ-ի ու Եվրամիության՝ Ռուսաստանի հետ անհաշտ դիմակայությունը Ուկրաինայի շուրջ:

4. Արարատը՝ որոշակի բարոյաքաղաքական շարժման հիմք

Թուրքիայի ու Ադրբեջանի՝ քրիստոնեական աշխարհի հետ սկսած քաղաքական սիրախաղի դիմակազերծմանը զուգահեռ՝ մենք պետք է գիտակցենք այն իրողությունը, որ տարածաշրջանի վերաֆորմատավորման թուրք-ադրբեջանական ծրագրերը անընդունելի են գլոբալ աշխարհաքաղաքական խաղի մասնակիցների համար: Բայց նրանք կարող են միմյանց դեմ օգտագործել այդ գիշատիչներին, քանի դեռ սկզբունքային համաձայնության չեն հասել մեծ հարցերում:

Ողջ խնդիրը նրանում է, որ մեր փոխարեն ոչ ոք չի պատրաստվում պաշտպանել մեր հողերը կամ հոգևոր գանձերը: Արտաքին աջակցության արժանանալու համար Հայաստանը պետք է կենդանության նշաններ ցույց տա՝ որպես Արարատին արժանի երկիր: Իսկ դա հնարավոր է ոչ միայն ֆիզիկական, այլև հոգևոր դիմադրության միջոցով, որում **Արարատի գործոնը պետք է շրջել թշնամու դեմ**: Հայաստանը կարող է մարդկության փրկության խորհրդանիշ Արարատի շուրջ միավորել շքեղության ու որկրամոլության մեջ խեղդվող քրիստոնեական աշխարհը՝ նրան մարդկային համակեցության որոշակի այլընտրանք առաջարկելու միջոցով: Այդ նպատակով Հայաստանը պետք է դառնա նոր ջրհեղեղ հիշեցնող ներկա գլոբալ քաոսից պատսպարվելու վայր, որտեղ մարդիկ

վերականգնում են բնության և միմանց հետ շփվելու նախնական պարզությունն ու անմիջականությունը: Այսօր դժվար չէ ողջ աշխարհին և առաջին հերթին՝ տարածաշրջանի ժողովուրդներին ապացուցել, որ **Թուրքը չարիքի դասական մարմնավորում է**, իսկ Թուրքիայի ու Ադրբեջանի առաջնորդները՝ **չարիքի տարածաշրջանային կերպավորումներ**: Դա արդեն զգում են Բալկաններում, Սիրիայում, Վրաստանում, և անգամ՝ Իսրայելում:

Մենք այսօր չենք կարողանում սեփական ուղեղի մեջ տեղավորել այն իրողությունը, որ եվրոպական երկրներում ու Ռուսաստանում արդեն խմորվում է բիբլիական Արարատի ու նրանով խորհրդանշվող երկրի՝ Հայաստանի բարության ու մարդկայնության մարմնավորումը լինելու փաստի նախնական ընկալումը: Հենց դա են որոնում այսօր Հայաստան այցելող միլիոնավոր զբոսաշրջիկները՝ Արարատի բիբլիական վեհությունը երկրպագող նորօրյա ուխտավորները: Մշակութային կկոչվի այս անբացատրելի զգացողությունը, թե՞ հոգևոր, այնքան էլ կարևոր չէ: Կարևորը Հայաստանի կողմից հետջրհեղեղյան նոր հասարակության մարմնավորումը՝ **բարիքի տարածաշրջանային կերպավորումը** դառնալու խնդրի առաջադրումն ու հիմնավորումն է: Գլոբալ տեղաշարժերի որոշակի հանգրվանում այդ խնդիրը հասունանալու է որպես ներկա պատերազմների ու ցնցումների ավարտն ազդարարող մարդկության փրկության առաջադրանք: Պատմական Արարատի երկրի զավակների կողմից նման խնդրի առաջադրումը պահանջում է հայերին բնորոշ նախնական պարզության, բարության ու **մարդկայնության** զուգորդումը՝ տեխնոլոգիական հասարակության նոր չափորոշիչների հետ, որոնցից երկուսն էլ իրենց սաղմնային վիճակում այսօր պահպանվում և զարգանում են Հայաստանում: Արարատի ստորոտին նման արժեհամակարգի վերականգնման խնդիրը լուծելու համար անհրաժեշտ կենցաղավարության որոշակի չափորոշիչների որդեգրումը կարող է նաև ներսից միավորել հայաստանյան հասարակությանը:

Ուրեմն բիբլիական Արարատի գերության մեջ լինելու փաստը հարազատորեն արտացոլում է ոչ միայն մեր ազգային կեցության ողբերգականությունը, այլև այն հաղթահարելու համար անհրաժեշտ՝ հին արժեքները նորացնող հետջրհեղեղյան հարթակի վերածվելու սուր կարիքը: Արարատը մեր մտքերից ու հոգուց հանելու նպատակ ունեցող արտաքին ու ներքին նկրտումներին հակազդելու ուղին «Արարատ» հասկացության միջոցով բարությունն ու մարդկայնությունը խորհրդանշող **գլոբալ** բարոյաքաղաքական շարժման՛ **Արարատյան շարժման** ձևավոր-

ման քաղաքական առաջադրանքն է, որը դուրս է ներկա հետազոտության շրջանակներից:

Խմբ.

Գրականության ցանկ

1. **Բարխուդարյան Վլադիմիր**, (Խմբ.). (2005). Աստվածաշնչական Հայաստան: Երևան: Նոյյան Տապան:
2. **Թումանյան Սվետլանա**, (2014). Շահ-Աբասը և Նոր Ջուղայի հայերը. Էլջին Գրոս'քլոուսի «Կարմելիտը» վեպում: *Վեմ*, (4), 92–111:
3. **Պետրոսյան Համլետ**, (2005). Տապանի իջման հնագիտական տվյալները և Մասիսը Արարատ վերանվանելու պատմական և առասպելական հանգամանքները (էջեր 91–99).
4. **Դևրիկյան Վարդան**, Արարատն ու Անին՝ Աբովյանի գաղափարական որոնումներում: (2009). Վեմ, *(3), 56–73:*
5. Նոր աշխարհակարգը և հին Թուրքիան: (2025). *Վեմ*, (1), 3–12:

Bibliography (Latin Script)

1. **Barkhudaryan Vladimir**, (Ed.). (2005). *Astvatsashnchakan Hayastan.* Yerevan: Noyyan Tapan.
2. **Tumanyan Svetlana**, (2014). Shah-Abasy ev Nor Jughayi hayery: Eljin Gros'klousi "Karmelity" vepum. *Vem*, (4), 92–111.
3. **Petrosyan Hamlet**, (2005). *Tapani ijman hinktakaranayin drvagy ēv Masisy Ararat veranvanelu patmakan ēv araspelakan hangamank'nery* (pp. 91–99).
4. **Devrikyan Vardan**, Araratn u Anin: Abovyani gaghaparak'an voronumnerum. (2009). *Vem*, (3), 56–73.
5. Nor ashkharhakar'k' u hin T'urk'ian. (2025). *Vem*, (1), 3–12.